ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ

Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

(Ընդունված է 2003 թվականի ապրիլի 18-ին)

Հոդված 123. Մարդու իմունային անբավարարության վիրուսով վարակելը

1. Այլ անձին մարդու իմունային անբավարարության վիրուսով (ՄԻԱՎ) դիտավորությամբ կամ ինքնավստահությամբ վարակելն այն անձի կողմից, ով գիտեր իր մոտ այդ հիվանդության առկայության մասին՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) անչափահասի նկատմամբ,

3) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:

~~**Հոդված 123. Մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով վարակելը**~~

~~1. Այլ անձին մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով վարակելու ակնհայտ վտանգի ենթարկելը՝~~

~~պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրհիսնապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:~~

~~2. Այլ անձին մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով դիտավորությամբ կամ ինքնավստահությամբ վարակելն այն անձի կողմից, ով գիտեր իր մոտ այդ հիվանդության առկայության մասին՝~~

~~պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:~~

~~3. Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝~~

~~1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,~~

~~2) անչափահասի նկատմամբ,~~

~~3) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ՝~~

~~պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից ութ տարի ժամկետով:~~

(123-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-119-Ն)